ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» հոկտեմբերի 2020 թվականի N 351

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ԾԱԾԿԱԳԻՐԸ ՃՇՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ՋԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ, ՄԻՆՉԵՎ 15.05.2001Թ. ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրանտ Բեգլարի Պետրոսյանի լիազորված անձ Դավիթ Ջավենի Դավթյանի կողմից ներկայացված դիմումը, 27.07.1986 թվականին կազմված տեխնիկական անձնագիրը, «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և 24.10.2019թ. տեղեկանքը, ղեկավարվելով՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. թիվ 186-Ն կադաստրային հատակագծերում և կադաստրային քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրամանով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 2-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-ին և 3-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ ***որոշում եմ.***

1. Ճշտել ք. Ստեփանավան Մայակովսկի փողոց թիվ 26 հասցեի անշարժ գույքի ծածկագիրը՝ որը համաձայն «ԱՐՏՅՈՄ ՍԱՔԱՆՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի գտնվում է 06-007-0255-0018 կադաստրային ծածկագրի տակ:
2. Վերականգնել Ստեփանավան համայնքի ք. Ստեփանավան 06-007-0255-0018 կադաստրային ծածկագրում գտնվող 860.1 քմ մակերեսով բնակելի կառուցման հողամասի հողհատկացման հիմքերը՝

   ա/ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան 06-007-0255-0018 կադաստրային ծածկագրի հողամասի մակերեսը 860.1 քմ

բ/ հողամասի սահմանները և հատակագիծը համաձայն հավելվածի:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված 860.1 քմ մակերեսով հողամասից 600.0 քմ օրինական հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր ցանկում, անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել Հրանտ Բեգլարի Պետրոսյանին, իսկ մինչև 15.05.2001թ. զբաղեցրած և առ այսօր օգտագործվող առանց իրավունք հաստատող փաստաթղթերի 260.1 քմ մակերեսով հողամասը, որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք անհատույց սեփականության իրավունքով հատկացնել՝ Հրանտ Բեգլարի Պետրոսյանին և մինչև 15.05.2001թ. վերը նշված հողամասում կառուցված բնակելի տան և անասնաշենքի նկատմամբ օրենքի ուժով անհատույց ճանաչել նրա սեփականության իրավունքը:
4. Ստեփանավան քաղաքի 06-007-0255-0018 ծածկագրի հողամասի վրա, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների և հարկադիր սերվիտուտ չառաջացնող՝ մինչև 15.05.2001թ. կառուցված՝ 69.75 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 6.3 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի, 79.08 քմ մակերեսով բնակելի տան 2-րդ հարկի, 21.57 քմ մակերեսով բաց պատշգամբի և 14.19 քմ մակերեսով անասնաշենքի նկատմամբ համաձայն հավելվածի ճանաչել՝ Հրանտ Բեգլարի Պետրոսյանի սեփականության իրավունքը:
5. Հաստատել վերը նշված անշարժ գույքի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք.Ստեփանավան Մայակովսկի փողոց 1-ին փակուղի թիվ 6 բնակելի տուն:
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2020 թվականի N 352

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԹԵԼՄԱՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 38 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ալվարդ Ալմարտունի Թորոսյանի կողմից ներկայացված 12.10.2020թ. թիվ Թ-327 դիմումը և 03.02.2017թ. N 03022017-06-0002 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387 -Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան քաղաքի Թելմանի փողոց թիվ 38 հասցեով՝ բնակավայրերի նպատակային նշանակության և բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասում գտնվող բնակելի տանը տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ Ստեփանավան համայնք, ք. Ստեփանավան Թելմանի փողոց թիվ 38/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«26» հոկտեմբերի 2020 թվականի N **353**

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ 05.08.2013Թ. ԹԻՎ 169 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Գոհար Գրիգորյանի 23.10.2020թ. թիվ Գ-395 դիմումը, Ստեփանավան համայնքի ղեկավարի 05.08.2013թ. թիվ 169 որոշումը, 25.03.1994թ. տրված սեփականության վկայագիրը, 15.08.2013թ. անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 15082013-06-0038 վկայականը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 23.10.2013թ. N169 որոշման 4-րդ կետը փոխարինել նոր նախադասությամբ՝ ք. Ստեփանավան, Հարությունյան փողոց թիվ 10 նախկին հասցեն փոխարինել և տալ նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան Հարությունյան փողոց թիվ 12/1:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆ